

40. ԵՐԿՈՒ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Մեկ քաղքի մեջ կենում էին էրկու զանկին թուշարներ։ Էս էրկուսը հ՚իրար հետ էղնում են աղբեր։ Էրկուսն էլ ավլատ չեն ունենում։ Մե վախտ անցնում է մեկին մե տղա է էղնում, մեկելին՝ մե աղջիկ։

Տղան որ էղնում է չորս հինգ տարեկան, տանում դնում են մե սիրուն հ՚օդա, որ արևի երեսը չը տեսնի։ Տղի կերածն է անօսկոռ միս ու անկորիզ չիր։

Էսենցով մի քանի տարի անցնում է, տղի հերը մեռնում է, մերը շատ քասիրնում է։

Օրըմ տղին չիր են տանում ուտելու։ Ջրի մեջ մի կորիզ է մնացեր, տղեն, կերած վախտ կորիզը որ հանում է, վերցնում քցում է, կորիզը դիպնում, փանջարի շուշեն ծակում է, արևի շողը ներս է մտնում փանջարից։ Արևի լուսը որ տեսնում է, տղեն խելքը թռցնում է, թևերը վեր է քշտում, հասնում է արևի հետ գյուլաշ։

Նես է զարնվում, նեն չարչրվում, բեզրում հ՚ընկնում է։

Մշակը հաց է բերում, աշում է, որ տղեն ճար ու իլլաճից հ՚ընկել է։

Տղան ասում է մշկին.— Էս ի՞նչ մարդ է, որ ներս մտավ իմ հ՚օդեն, անում, չեմ անում, ոչ կարամ բռնել, ոչ էլ դուրս է հ՚ելնում, էս ի՞նչ աներես բան է։

Մշակն աշում է, որ էլ պահել չի ըլի, ասում է.— Էդ մարդ չէ,

արևն է, լուս տալողը էդ է, էդոր լուսից, տաքությունից մարդիկ ման են դալում, առուտուր են անում։

— Որ էդենց բան կա, էլ ես ըստե չեմ մնալ, ես էլ եմ դուրս հ'ելնում, աշեմ, թե էդ ինչրխ բան է էդ արևը։

Դուրս հ'ելավ տասնուհինգ տարեկան շահել տղեն, էնքան սիրուն, որ արև կը լմաներ։ Խալխի պռունկը պառվում էր, էդենց էլ սիրուն տղա չէ էղեր։

Տղեն, օր մի իր մշկի հետ ման էր գալում չարսուի մեշ, աշում է, որ ամեն մարդ իր համար մի գործ անում է, առուտուր, բան։ Տղեն դառով էկավ տուն։

Մերը գալում հարցնում է տղին թե.— Ի՞նչ տեսար։

Տղեն ասում է.— Մեր, ամեն մարդ իր համար առուտուր է անում, ես էլ պտի առուտուր անեմ։

Մերն ասում է.— Որթի, մենք ի՞նչ ունինք, որ դու ինչ առուտուր անես, մեղի մեկ կով կա, ուրիշ հեչ մի բան չունինք։

Տղեն մշկի հետ հ'ելնում առնում է կովը, քշում տանում է չարսուն ծախելու։ Կայնում, կայնում ինչունի կեսօր, կայնում աշում են, որ հեչ մի մարդ հարցնող չկա թե «էդ ի՞նչ կով է», դարձնում, քշում բերում են, որ գան տուն։ Գալում մե հարուստ թուշարի դռնից անցնում են, աշում են, որ մի երևելի մարդ դուրս հ'ելավ դռնից, կանչում է տղային։

Հարուստը էդ տղի հոր ախպրացուն էր, էն տղին ճանչնում էր, տղեն էնոր չէր ճանչնում։ Տղի հերը իր հարուստ վախտ էգ մարդուն շատ լավություն էր արած։ էգ հարուստը էնքան վատ մարդ էր, որ ամեն բան մտահան էր արած։ Տղեն ու իր մեր էնքան աղքատ էին ապրում, հեչ մեկ օր էնոնց հ'երես չէր աշում,

— Ա՜յ տղա, էգ ի՞նչ ես ծախում։

Տղան ասում է.— Կով եմ ծախում, աղա շան։

— Ա՜յ տղա, էդի կո՞վ է որ դու ծախում ես, ուրիշներ լսեն կը խնդան քու վրեն։

— Հպա ի՞նչ է, աղա շան։

— Ի՞նչ, ղազ է ի՞նչ է, չես տեսնում։

— Աղա շան, դու ընչի ես էդենց ասում, ախր էսի կով է, դու ասում ես «ղազ է»։

— Տեսեք տո՜, տեսեք էս տղեն իր խելքը կորուցել է, ղազին կով է ասում։

Տղեն իրան, իրան մտածում է. «Վայ թե էսի ղազ է, որ էս մար-

դը ասում է».— Աղա ջան, թող քու խոսքդ էղնի, ղազ է, ղազ է, ի՞նչ ես տալում, տուր։

— Ղազի դին ինչ կըլլի, քշիր գա տուն, մի քանի ղուրուշ է ավելի կտամ։

Էդ հարուստ մարդը կովը տարավ տուն, մե պզտիկ դուռ բացեց, դռան մեջն էլ մե պզտիկ ծակ կար, կովի պոչը էն ծակեն հանեց, տվեց տղի ձեռք ու ներսեն կովի պոչը կռեց մնաց տղի ձեռ։ Ինքը գնաց ու էլ չէկավ, փարեն էլ չըտվեց։

Տղեն կենում, կենում աշում է, որ մարդ դուրս չի գա, թողեց դառավ, էկավ տուն ու մորը պատմեց գլխի էկածը։

— Մեկ հարուստ մարդ ընձի խաբեց, կովը ղազ դեյի առավ ու փարի տեղ էս պոչը տվեց, դուռը փակեց, կայնա, կայնա չէկավ, թողի էկա։

Մերը որ լսում է, ասում է.— էդ ինչըխ որ պատմում ես, էգ հարուստը քու հոր հընկերն է, էդ մարդ քու հոր կարողությունը կերավ։

Տղեն մի քանի անգամ գնաց էկավ, էդ անաստված մարդ բան չտվեց։ Տղեն մտածում է. «Աճապ ես ինչըխ անեմ, որ մե դյուզանով դուրս առնիմ»։

Գալում մոր մոտ ասում է.— Ադե, ըսկի փարա չունի՞ս, որ տանիմ ընձի շոր առնիմ։

Մերն ասում է.— Իմ մոտ հարիր ղուրուշ փարա կա, ավելի չկա։ Մերը բերում էդ փարեն տալում է տղին, տղեն էրթում իրան մեկ ղաթ լավ հալավ է կռում։ Հագնում դառնում է մի լավ հարս, էնքան սիրուն, որ տեսնողի խելքը էրթում է։

Տղեն գալում է, մորն ասում է թե.— Ադե, գնա էդ հարըստի մոտ ասա թե. «Ըշթը իմ տղիս կարգեցի, մի շատ սիրուն հարս հուզեցի, էղավ որ տղես մեռավ, հարսս մնացեր է տուն, քանի հարուստ երեխի մարդ էկավ հ՚ուզելու չի առնում, կայներ է քեզի է հ՚ուզում առնել»— տես ինչ կոսե։

Մերը հ՚ելնում էրթում է էգ հարուստի տուն։ Դուռը զարնում է, հարուատն ասում է.— Գնացեք տեսեք էդ վո՞վ է դուռը ծեծում։

Գալում աշում են, որ մի կնիկ, հարցնում են թե՝ ինչ ես ասում։

Ասում է.— Ես ձեր աղի հետ քիչ բան ունիմ, գնացեք իրան ասեք։

Էրթում ասում են, թե.— Մի աղքատ կնիկ է հ՚ուզում է քեզ տեսնի, աղա։

— Գնացեք ասեք, թող ներս գա, աշենք թե էդ վե՞վ է, ի՞նչ կնիկ է։

Կնիկը էրթում է ներս, ասում է.— Աղա ջան, ըշթը մի քանի օր առաջ իմ տղիս կարգեցի, բիրդան մեռավ։ Հիմի, սիրուն, լուսի պես հարսս մնացեր է տուն, ես էլ չեմ կարա պահել։ Քանի հարուստ երևելի մարդիկ հ՚ուզելու էկան, չ՚առավ, հիմի կայնել է քեզ է առնում, էդոր համար ընձի ճամբեց քու մոտ։

Հարուստի հ՚ոտներ գետնից կռավ։ Ուրախությունից չէր իմանում ինչ ասե։

— Լավ, ես էլ առնում եմ քու հարսիդ, որ էդենց է քեզի բոլ էլ փարա կուտամ։ Էս հ՚իրիկուն սհաթի ընեին ձեր ճամբեն կաչեմ։

Թուշարը էդ հ՚իրիկուն լավ պատրաստություն տեսավ։ Մշկներուն թե կես գիշերին էր բաց թողնում, էդ հ՚իրիկուն արևը նոր էր մեր մտեր, որ մշակներուն թոմրին ղրկեց իրանց տներ։

Սհաթի իննը հլա չէր էղած, մեկ էլ աշեց, դուռը ծեծեցին։ Հ՚ելավ դուռը բացեց, ներս էկան հարս ու կեսուրը։ Հարուստը հարսի սիրունությունը որ տեսավ, խելք գլխուց թռավ։ Ներս տարավ թե չէ, խեղճ կեսրոջ գլուխը կռեց քցեց հորի մեջ։ Հարսը խաբար չէղավ, թե կեսրոջ գլուխը կռեց։ Գնաց հարսի հոդեն, որ քեֆ անեն, պառկեն։

Հարսն ասում է.— Քեզի շատ հարուստ են ասում, ինչունի որ քու բոլոր հարստություն ընձի ցուց չտաս, ես քու մոտ պառկողն չեմ։

Հարուստը հ՚ելավ, առավ բալնքներ, հարսին տարավ թոմար հոդեք ման ածեց, էկան մեկ պղտիկ դռան մոտ կայնան։ Հարսը հարցնում է թե.— Էս հ՚օդի մեջ ի՞նչ կա, բաց աշենք։

— Ըտտը օնչինչ էլ չկա, ի՞նչ բաց անեմ։

— Չէ, անկարելի է, որ բաց չանես, քեզ չեմ առնում։

Էդ հ՚օդի դուռն էլ բացեց։ Ներս են մտնում աշում է, որ էդ հ՚օդի մեջ մե մեծ հոր է փորած, ու լիք շանդակ լցած։ Տեսնում է, որ մոր շանդակն էլ է հոդ։ Մտքի մեջ կոսե. «Լավ, դու իմ հոդուն վայ տաս, սրեն քեզի էլ կը դա»։

— Լավ, լավ, բոլ է, ամեն բան տեսա, քելե էրթանք։

Գալում են իրանց օթախը, հարսը ասում է թուշարին.

— Հանվի շորերդ որ պառկենք։

Թուշարը հանվում է, որ պառկի, հարսն ասում է.

— Քիչ սաբր արա, քեզի բան ունիմ ասելու։

— Դեհ, ասա, էլ ի՞նչ ես մարդու հոգին հանում։

— Դու էն հարուստը չե՞ս, որ կովը իմ ձեռքից ղաղ դեյի առար, հա, ահան, էս էլ կովի պոչը։— Հանում, կովի պոչը ցուց է

տալում։ Թուշարի ծնկները դողում են։ Հարսը, որ կովի տերն էր, քաշում է տուրք, էնքան է ծեծում, որ հարուստ լեզվից, բերնից հ՚ընկնում է, վերցնում չվանով կախում է ակուշկից ու առնում է մե պարկ օսկի ու հայտե էրթում է։

Սաբահտան վաղով դալում են մշկներ, աչում են, որ դռները թոմարի բաց են, ներս են մտնում աչում են, որ աղեն կախված է փանջարից, հասնում հ՚իջցնում են, հարցնում են թե.— էս ի՞նչ բան է ձեռք տվեր իրան։

— Ա՜խ, կովի տերը ընձի էսենց էս օրը քցեց։ Հ՚ելեք բառնանք, էրթանք մի ուրիշ քաղաք, որ կովի տիրոջ ձեռքից ազատվենք։

Հ՚ելնում են, տուն, հարստութուն բառնում ու թողնում էրթում են։

Տղեն տեսնում է, որ հարուստը բառցավ, փախավ։ Էրթում թոփ է անում քաղքի միջից իր հընկերներին, մի լավ քեֆ են անում ու հ՚ելնում հ՚ընկնում են թուշարի հ՚ետևեն։ Էրթում մի ուրիշ քաղքի մոտ հասնում են, որ բեռներ թափեր հանգստանում են։ Թուշարը, որ տեսնում է էդ տղերանց, ասում է.— Էլի կովի տերն էկավ։

Հասնում, բռնում են թուշարին, մշկներ փախնում են։ Էլի տուր, որ կըտաս, էնքան են տալում, որ լեզվից, բերնից քցում են, տեղն ու տեղ առնում են բավական օսկի ու դառնում են։

Տղեն ասում է.— Հլա դու էլի չ՚պրծար իմ ձեռքից, քու հախ դատը հետև է։

Թուշարի խելքը գալում է վրեն, մշկները թոփ են էղնում։ Էդ մարդն ասում է մշկներին.— Տղերք, արեք էլի հետ դառնանք մեր քաղաք։ Բոշ բան է, մենք հ՚ուր որ էրթանք կովի տիրոջ ձեռքից չենք կարա ազատվի։

Ընտից էլի դառնում գալում են իրանց քաղաք։

Գալում էլի էրթում է նստում իր տների մեջ։

Կըսե.— Իլլաճ չկա, ինչըխ որ անեմ, էս կովի տեր օրըմ ընձի իմ տան մեջ կը սպանե։

Թալլալ է քցում քաղքի մեջ թե.— Կովի տեր վեվ է, թող այան հ՚ելնի, այս ինչ թուշարին որ կով է ծախեր, թուշար հ՚ուզում է իր արևից սիրուն աղջիկ էնոր տա։

Տղեն լսում է թալլի ձեն, հ՚ելնում ասում է.— Ես եմ կովի տեր։

Բռնում տանում են թուշարի մոտ։ Թուշար հարցնում է.— Դու ե՞ս կովի տերը։

Տղեն հանում կովի պոչը ցուց է տալում, ասում է, թե ինչըխ

հարսի շորերով մոր հետ էկավ, ծեծեց ու կախեց, թե ինչրխ իր հրն-կերներով գնաց հասավ էն քաղքի մոտ ու էլի ծեծեց ու ահագին փող բերեց։

Թուջարը բերում իր աղջիկը պսակում է էդ տղի վրեն, իր բոլոր ունեցած, չունեցածը գրում է տղի գլխին, լավ հարսնիք կէնե, նոր կը պրծնի կովի տիրոջ ձեռքից։